



Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԵՐԵՔ ՀԱՐՑ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՅՐՈՒԹԵՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. ԱճԱՌՅԱՆ

Բ



որյուն պատմիչը Հռոփանոս դարի աշխատանքի մասին խոսելով՝ ասում է. «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն քտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զերբագոյնն և զլայնագոյնն, զկարն և զերկայնն. զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ» (Կորյուն, հրատ. Երևան, 1941 թ., էջ 48):

Կորյունի վերջին բառերը, որոնք շեղատառ նշանակեցինք, տեղիք են տվել զանազան սխալ բացատրությունների՝ զանազան հեղինակների կողմից: Օրինակ՝ Ստ. Նաղարյանը («Հիւսիսսփայլ», 1860, էջ 241) հասկանում է ձայնավորների կարճն ու երկարը և բաղաձայնների պարզն ու կրկնավորը: Նույնպես Marquardt իր Հայ նշանագրերի ուսումնասիրության մեջ (տպ. Վիեննա,

էջ 31) կարն և երկայն բառերով հասկանում է ձայնավորների ամանակը (կարճ աւ երկար a, ä են), առանձին և կրկնաւոր բառերով էլ հասկանում է լ, զ — ր, ու — լ, վ տառերը, որոնցից լ, ր, լ համարում է «առանձին», իսկ զ, ու, վ «կրկնաւոր» (երկու ձայնից բաղկացած, փքր թե լլ = Ղ, րր = Ռ, իի = Վ): «Ներբագոյն»-ի մասին չի խոսում:

Հ. Բ. Սարգիսյանն էլ (Բազմ. 1897, ապրիլ, հավել. էջ 7, սյունակ Բ) հերքելով Տաղավարյանի կարծիքներն այս մասին և զիմելով միջին դարերի քերականագետների բառերին, հասկանում է «Ներբագոյն» բառով կ, պ, տ, ծ, և տառերը, «կարճ» բառով ա, ի, ու, տառերը, «երկայն» բառով է, ով ձայնավորները և եւ, ըւ, իւ երկբարբառները, «կրկնաւոր» բառով ը, ր, լ, իւ, ջ, չ, ջ, ու, ց տառերը, իսկ մնացյալն էլ կոչում է «առանձին»:

Այս բոլորը սխալ մեկնություններ են:

Ամենից առաջ պետք է հարց տալ, թե ի՞նչ մարդ էր Հռոփանոսը և ինչու՞ համար Մեսրոպը դիմեց նրան:

Քննությունները ցույց են տալիս, որ

*) Այնպիսով տես «ԷՋՄԻԱՄԻՆ», հունվար, 1946 թ.:

Հռոփանոսը գեղազիր էր (գորիշ ոմն՝ ըստ Կորյունի) և Մեսրոպը պիմեց նրան՝ իր պազմած տառերը գիղեցիկ կամ ճաշակալիոր ձևով նկարել տալու։ Համար։ Եթե այդպես է, ուրեմն վերի բառերն էլ տառերի գեղադրական հիերը նշանակող բառեր պիտի լինեն և ոչ ուրիշ բան։ Եթե Հռոփանոսը քերականագետ կամ լեզվաբան լիներ, այն ժամանակ միայն կարելի էր սպասել նրանից քերականական ուղղումներ։ Ինչպես լեզվաբանությունը հաստատել է, Ե դարում և ավելի առաջ էլ հայերենը կարճ ու երկար ձայնավորներ չունի։ Հետևաբար կարելի է Կորյունի կարճ ու երկայնը ձայնավորների ամանակի համար հասկանալ, ինչպես անում են նազարյանը և Մարքվարտը։ Բայց նույնիսկ Եթե Ե դարում հայերենը կարճ ու երկար ձայնավորներ ունեցած լիներ, Մեսրոպի կազմած այբուբենում չկա այդպիսի բան, ուստի Կորյունի ասածը և Հռոփանոսի բարձր տարբեր բան պիտի լինի։

Նույնպես Կորյունի «առանձինն» ու «կերկնաւորը» չեն կարող ձայնաբանական արժեք ունենալ։ Մի մարդ, որ իր լեզվի մեջ չունի այս ինչ կամ ուրիշ հնչյունը, չի կարող էլ լսել ու զանազանել, երբ մի օտարը հնչի։ Թուրքն ու պարսիկը չեն կարողանում զանազանել պ, փ, ս, ծ և ց, զ և ձ ձայնները, մենք էլ չենք կարողանում զանազանել յլուսցեպենի յ և զԳ ձայնները։ Այսօր էլ եվրոպացիք չեն զգում մեր Բ և Ռ ձայնների տարբերությունը և ոչ միայն եվրոպացիք, այլ և նույնիսկ Վրաստանի հայերը։ Այս դատողությունները հույն Հռոփանոսն էլ չպիտի կարողանար զանազանել հին հայերենի Բ—Ռ, Լ—Պ, Ո—Վ ձայնները, որոնցից վերջին չորսը մինքն էլ այսօր չենք կարողանում զանազանել։ Հայերենի 36 ձայններից առնվազն 15 հատը (բ, ժ, խ, ծ, ե, ձ, լ, ե, յ, շ, ջ, վ, ր, ց) չէր կարող զանազանել խեղճ Հռոփանոսը, էլ ինչու՞ պիտի դիմեր Մեսրոպը նրան՝ այս տառերի ձայնաբանական կանազանությունը որոշելու համար։ Նշանակում է, թե այս բառերն էլ ուրիշ բան են նշանակում, բան ինչ որ անթաղում են նազարյանը և Մարքվարտը։

Մնաց «նրազոյն»-ը։

Կորյունի հին հրատարակությանց մեջ մի բառ պակաս էր այստեղ, որ այժմ Կորյունի քննական հրատարակությունը գտավ ու ավելացրեց՝ այդ է— զնրազոյնն և գլայնազոյնն։ Մի միակ այս բառը կարող է ղնել մեզ ուղիղ ճանապարհի վրա և ցույց տալ Կորյունի տված վեց բառերի իմաստը։ Այդ վեց բառերը տառերի գեղադրական

ձևին են վերաբերում։ Նրազոյնը և լայնազոյնը նշանակում են տառերի հաստ ու բարակ գծերը, օրինակ՝ Ե տառի գծադրության մեջ ձախակողմյան երկար սյունը և աջակողմյան կարճ սյունը հաստ են, իսկ թնր բարակ է։ Այս է հայերեն տառերի ընդհանուր գեղադրական ոճը։ Հորիզոնական գծերը բարակ են, իսկ ուղղահայաց գծերը հաստ։ Այս է Կորյունի «նրազոյն և լայնազոյն» կոչածը։ Այս բացատրությունը հետո ինքնին հասկանալի է դառնում Կորյունի կարճն ու երկարը, որով պիտի իմանանք տառերի երկար ու կարճ սյուները։ Սրա լավագույն օրինակը տալիս է Պ տառը, որի աջակողմյան սյունը երկար է, երկու ձախակողմյանները մին մյուսից կարճ։ Մնում է առանձինն ու կրկնաւորը, որ նմանապես գեղադրական ոճի համար ասված պիտի լինի։ Արեղյանը, որ իր մի հոգվածում (Սովետ. գրականութ. 1941 թ., № 2, էջ 45—46) ցույց է տալիս Մարքվարտի սխալները և շատ ճիշտ է բացատրում նախորդ չորս բառերի իմաստը, այստեղ Կորյունի առանձինն բառով հասկանում է հայերենի ջոկ, մենակ մի տառով գրված հնչյունները, իսկ կրկնաւոր բառով հասկանում է երկու տառով կազմված ու հնչյունը, որի հորինումը վերագրում է Հռոփանոսին։

Ես չեմ ընդունում գեղազիր Հռոփանոսի մասնակցությունը ու ձայնավորի հորինման մեջ։ Եվ ահա իմ պատճառաբանությունը։

Մեսրոպը Եդեսիայում կազմել էր արդեն իր այբուբենը. այստեղ տոշել էր նաև ու, ինչպես նաև իւ գրերու ձևը։ Նա գիտեր, որ հույները դրամ են Լեկտառ ու, իսկ ասորիները և պարսիկները գրում են վ և կարդում ու։ Ինքը Մեսրոպը հետևեց այս երկուսից որևէ մեկին, կամ հետևեց հունարենին և հնարեց հայերեն ու ձևը, կամ հետևեց պարսիկներին ու ասորիներին և վ ձայնին տվեց նաև ու հնչյունը։ Առաջին դեպքում Հռոփանոսի մասնակցությունը վերանուշ է, բայց երկրորդ դեպքն էլ չի կարող տեղի ունեցած լինել, որովհետև փորձից գիտենք, թե Մեսրոպը ընթանա՞ծ էր մի տառին մի հնչյուն տալու սկզբունքը։ Ուստի չէր կարող պատահել, որ նա վ տառին նաև ու հնչյուն տված չլիներ։ Մնում է ուրեմն անթաղել, թե նա ու ձայնավորի համար Եդեսիայում հնարել էր առանձին մի տառ՝ մի նշանից բաղկացած (ինչպես արեց հետո աղուաներեն այբուբենի համար)։ Արդ՝ կարելի է երևակայել, որ Մեսրոպը նախապես ու ձայնավորի համար առանձին մի տառ հնա-

րած լինելը (ինչ որ մի մեծ առաջնություն պիտի լինե՞ր մեր այլաբանի համար) և նաև Հոսիանոսի դրոշմամբ ջնջած և հունարենի համաձայն հորինած լինելը ու երկատուր։ Այդ անկարելի է ուստի երկու դեպքում էլ վերանում է Հոսիանոսի մասնակցությունը ու ձայնավորի հորինման մեջ և նրա հորինումը մնում է Մեսրոպին։

Կա նաև ա՛յն կետը, որ դժվար թե Կորյունը մի միակ ու-ի համար առանձին բաժանմունք ստեղծեր (կրկնաւոր) և մնացյալ գոյոր տառերը անվանե՞ր առանձին։ Եթե ու-ի նման զուգատառ, բայց միաձայն կապակցությունների թիվը մի քիչ ավելի լինե՞ր հայերենում (ինչպես գերմաներենում ch sch, tsch, ph, ih, ie են), կարելի էր այդ երկու բաժանմունքների գոյությունը ընդունել։

Պետք է ստել նաև, որ եթե մյուս շորս բառերը տառերի գծագրական ձևերն են մատնանշում, ինչո՞ւ այս երկուսն էլ (առանձինն ու կրկնաւորը) նույնը չպիտի լինեն և ձայնաբանական երևույթներ պիտի նշանակեն։ Կրկնաւոր բառի սովորական ու տարածված իմաստը կասեցրել է մեր միտքը և առաջնորդել է մեզ սխալ մտածողության։ Բայց եթե աչքի առաջ բերենք կրկնել բառի հնագույն հայերեն նշանակությունը, որ է «ծալել, ոլորել» (տես ՆՃԲ, հտ. Ա, էջ 1136, սյունակ Բ, որից և ծուճ կրկնել «ծունկը ծալել»), այն ժամանակ, ի հարկե, կմտածենք, որ նաև այստեղ կրկնաւոր նշանակում է «ծալած, ոլորած» և կրկնաւոր (կամ կրկնայար) բառով Կորյունը հասկանում է կրոր փաթույթներ ունեցող տառերը (Ժ, Թ, Մ, Զ, Ջ, Լ, են), իսկ առանձին բառով հասկանում է այն տառերը, որոնք ուղիղ շիտակ անջատ ու մենակ կանգնած են, ինչպես Ո, Ս, Լ, Բ են։

Հոսիանոսի մասնակցությունը հայերեն տառերի հորինման մեջ առհասարակ պետք է դուրս գցել ծրագրից։ Այն քննիչները, որոնք Հոսիանոսին մասնակից են դարձնում Մեսրոպյան տառերի հորինման գործին, ուշադրությամբ չեն կարգում Կորյունի խոսքերը. «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հոսիանոս անուն դտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն... յօրինեալ և յանկուցեալ»։ Վերջին երկու դերբայները, որոնք Կորյունյան յոճով իբրև դիմավոր բայ են գործածված, իբրև ենթակա ունեն ոչ թե Հոսիանոսին, այլ Մեսրոպին, որ հիշված է շատ ավելի առաջ, ուրիշ բազմաթիվ դերբայներով։ Եթե յօրինեալ և յանկուցեալ դերբայ-

ների ենթական Հոսիանոսը լինե՞ր, գտեալ բառին հաջորդող որով հարաբերականը սեռական հոլով պիտի լինե՞ր (որոյ)։ Բայց այսպես չէ. այլ գործիական հոլով է (որով)։ Ուրեմն և Հոսիանոսը մի գործիք է, մի միջոց, որով Մեսրոպը «յօրինել և յանկուցել» է իր տառերը, այսինքն այն տառերը, որ արդեն Եղեսիայում, նախ քան Սամոսատ գալը և Հոսիանոսին դռնելը, «ծնել էր» և «նշանակել, անվանել և կտրգել ու հորինել սիղոբաներով ու կապերով»։

Այժմ երկու խոսք էլ Հ. Բ. Սարգիսյանի այն կարծիքի համար, թե ներագոյն են բառերը պետք չէ առնել միջին դարի քերականների դրած իմաստով։

Նախ՝ արդեն ասացինք, որ Հոսիանոսը դեղագիր գրիչ էր և ոչ քերական, ուստի Մեսրոպը չէր դիմել նրան քերականական ուղղումներ մտցնելու համար իր այլաբանի մեջ, ուլ միայն գրչագրական։

Երկրորդ. եթե նույնիսկ Մեսրոպը պետք ունեցած լինե՞ր քերականական ուղղումների, չէ՞ր կարող դիմել Եղեսիայի վարպետ քրտականներին, որպիսիները չէին պակասում աշուշտ այդ համալսարանական քաղաքում։

Երրորդ. բայց ի՞նչ պիտի լինեին այն քերականական ուղղումները, որոնք անհրաժեշտ էին որևէ այլաբանի կազմության համար։ Մի՞թե կարիք կար անպատճառ տառերի նուրբ, միջակ կամ թավր որոշելու, և այդքան բանն է՛լ չգիտե՞ր Մեսրոպը, նաև Եղեսիայի ասորի քերականագետները, և միայն Հոսիանոսը գիտե՞ր։

Չորրորդ. Կորյունի վեց բառերից եթե «նրբագոյնն», «առանձինն», «կրկնաւորը» են առնենք քերականական իմաստով, հապա «լայնագոյնն» ի՞նչ քերականական իմաստով պիտի առնենք։

Հինգերորդ. և վերջապես, միջին դարի քերականները չեն ասում կրկնաւոր կամ կրկնայար, այլ կրկնակ.— չեն ասում ներագոյն, այլ նուրբ։ Բառերի այս տարբեր ձևն էլ բավական է մեզ ասելու համար, թե նրանք միջին դարի քերականական իմաստով չեն, այլ գեղագրական։

Գ.

Շատ կարևոր է քննել այն հարցը, թե ի՞նչ էր անում Մեսրոպը այնքան երկար ժամանակ Եղեսիայում, ի՞նչ էր իր որոնումների և խուզարկությունների նպատակը, ի՞նչ էր պատճառը այն տանջանքի, որ նա կրում էր։ Մի՞թե՞ մի շատ դժվար բան էր որևէ լեզվի այլաբան կազմելը։ Եթե նա Դանիելյան այլաբանից դժգոհ էր, չէ՞ր կարող առանց թափառելու Միջագետք և Եղեսիա, հենց

Հայաստանում կազմել մի այնպիսի այբու-
բեն, որ լրացնեն իր բոլոր պահանջները:

Անշուշտ Մեսրոպի դժվարություններն ու
որոնումները լեզուների գիտություն չէին վե-
րաբերում, որովհետև հայերենի տառեր հնա-
րելու համար նախ և առաջ հայերեն իմանալ
էր պետք և ո՞վ էր այն միջագետցին, որ
Մեսրոպից ավելի հայերեն իմացած լինե-
ր: Իսկ եթե հունարենի և ասորերենի գիտու-
թյան կարիք կար, Մեսրոպը ինքը, եթե ոչ
Սահակ կամ ուրիշ գիտակ անձեր, Հայաս-
տանում կարող էին հարկավոր չափով օգ-
տակար լինել: Ուրեմն որոնումները այս
կողմից չէին:

Նաև Մեսրոպի դժվարությունները տա-
ռաձևերի հնարման մեջ էլ չէին, որովհետև
այդպիսի դժվարություններ երբեք չծագեցին
ոչ վրացերեն և ոչ էլ աղվաններին տառերի
հնարման ժամանակ:

Հարցումների պատասխանը գտնելու հա-
մար պետք է երթալ մի քիչ հետ և ձեռք առ-
նել Դանիելյան գրերը:

Ի՞նչ ստացավ Մեսրոպը Դանիելից. այբու-
բենի ցուցակ, թե մի ամբողջական գրը-
վածք: Անշուշտ դա մի հասարակ ցուցակ
էր, որի վրա գրված էր ասորերեն լեզվով
«այս է գիր հայոց» և տառերի մոտ էլ դրված
էր համապատասխան ասորերեն տառը:
Ճիշտ այնպես, ինչպես այսօր մենք տես-
նում ենք էջմիածնի (այժմ Երևանի) Մատե-
նադարանի № 7117 ձեռագրում. «Գիր յու-
նաց, որ է հելլենարէն», «Ասորեաց գիրն է»,
«Վրացոց գիրն է», «Գիր խալսեաց» ևն.: Այս
վերնագրերից հետո դրված է այդ լեզուների
ամբողջ այբուբենը՝ իրենց անուններով և
արժեքով (հայատառ): Անմիտ բան կլինե-
ր, եթե երևակայեինք, թե այդ ցուցակը մի ա-
ռանձին թերթիկ կամ պնակիտ էր, որովհետև
ո՞ւմ ցավն էր կազմել այդպիսի աննպատակ
մի թերթիկ և գցել մի կողմ: Ուստի պիտի
ընդունենք, թե դա գտնվում էր որևէ ասորե-
րեն գրքի կամ ժողովածուի մեջ, ինչպես է
և մեր վերոհիշյալ № 7117 ձեռագիրը: Դա-
նիելը պատահաբար գտել էր այդ ձեռագի-
րը և տեսել այնտեղ հայերենն այբուբեն-
ր. և երբ Վոսաճապուհը Վահրիճի և Աբելի մի-
ջոցով պահանջեց այդ գրերը, Դանիելը ար-
տագրեց այդ ցուցակը, տառերը, որ ասո-
րական այբուբենի շարքով էին, շարքից հու-
նարենի շարքով, ասորերեն համապատաս-
խան տառերի փոխառն զրավ հունարեն
համապատասխան տառերը և ուղարկեց
Վոսաճապուհին:


Թե իրոք Դանիելի մոտ գտնվածը տառերի
մի ցուցակ էր և ոչ գիրք, այդ մասին վկա-
յում են հենց պատմիչները:— Յայնժամ
այստմէր նոցա արքայն՝ վասն առն ուրումն
ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ
անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն
նշանագիրս ազկարեւաաց հայերէն լեզուի
(գտնալ)... նախ ինքն տեղեկանայր ի Դա-
նիէլէ նշանագրոյն և ապա առնալ ի նմանէ
առաքէր առ արքայն լերկիրն Հայոց... ըն-
կալեալ զնշանագիրսն ի Հաբելէն, ուրախ
լինէին... Այսպես Կորյուն, այսպես և Փար-
պեցին, հորինացին և ուրիշներ:

Բացի պատմագիրների վկայությունից՝
մեր առողջ դատողությունն էլ ցույց է տա-
լիս, որ Դանիելի գտածը և ուղարկածը տա-
ռացուցակ էր և ոչ գիրք: Որովհետև եթե
գիրք լիներ, այդ գիրքը կամ հայերեն պիտի
լիներ և կամ որևէ ուրիշ լեզվով: Զէր կարող
ուրիշ լեզվով լինել, որովհետև Մեսրոպը
խսկույն դեն պիտի գցեր, ասելով թե սա
հայերեն չէ: Բայց չէր էլ կարող հայերեն
լինել, որովհետև տեսնվեց, որ հայերեն լեզ-
վին հարմար չի գալիս: Եվ եթե ո՞չ հայերեն
էր և ոչ ուրիշ լեզվով, դրեմն հասարակ մի
ցուցակ էր՝ վերնագրված «այս է գիր հայոց»,
ինչպես ասացինք:


Այս բացատրությունից հետո ամեն ինչ
պարզվում և հասկանալի է դառնում: Եթե
Մեսրոպը իրոք գնաց Ամիդ՝ Դանիելի մոտ,
իր նպատակն էր անձամբ տեսնել այն գիր-
քը, որից քաղված էր «հայոց այբուբենը»,
իմանալու համար թե որևէ ուրիշ բացատ-
րություն կա՞, կարելի՞ է նրա մեջ գտնել
պակաս տառերը: Եվ երբ տեսավ, որ Դա-
նիելը ոչինչ չգիտե, գրքումն էլ ոչինչ չկա,
անցավ Եդեսիա, այդ քաղաքի նշանավոր
գրադարանում շարունակելու համար իր ո-
րոնումը: Խաբվելով ցուցակի վերնագրից
«Այս է գիր հայոց» և հավատալով, որ իրոք
դա հայոց գիրն է, նա մի առ մի. աչքից
անցկացրեց Եդեսիայի գրադարանի հազա-
րավոր ձեռագրերը, տեսնելու համար թե մի
ուրիշ տեղ էլ կգտնի՝ այդ ցուցակը, կա՞ն
այնտեղ պակաս գրերը, կամ թե կա՞ արդյոք
որևէ գիրք՝ գրված այդ այբուբենով, որ իմա-
նա թե պակաս հնչյունները ինչպե՞ս էին
արտահայտված: Մեսրոպի աշխատանքը
զուր անցավ. այսինքն ոչ մին գտավ, ոչ
մյուսը. կամ եթե գտավ մի գիրք, տեսավ,
որ հայերեն լեզվով չէ, ալ որևէ օտար լեզ-
վով: Այն ժամանակ համոզվեց, որ ինքը
խաբված է, Դանիելյան գրերը հայերեն չեն,
ուստի դեն գցեց նրանք և խսկույն հնարեց

իր ուզած ձևով ու դրույթամբ հայերեն գրերը, ինչ որ երկարատև աշխատանքի՝ կարոտ չէր:

Իմ կարծիքով ամբողջ թյուրիմացությունը, որին զոհ գնացին թե՛ Դանիելը և թե՛ Մեսրոպը, արամեական և արամեան (հայ) բառերի շփոթությունից էր առաջանում և նորագյուտ այն տառերը ուրիշ բան չէին, եթե ոչ ինչ որ արամեական հնացած տառեր: Ասորերեն տառերով «արամեական» բառը


գրվում է  *al-āramāyā*

իսկ «հայերեն» գրվում է

 *armenāya*

Այս երկու բառերը գրչությամբ այնքան նման են իրար, որ ջատ հեշտությամբ կարելի էր շփոթել դրանք իրար հետ, այսինքն «ասորոցը» կարդալ «հայոց»:

Ռընանը իր Histoire des langues sémitiques աշխատության մեջ, հտ. Ա, էջ 273 ասում է թե ասորական բարբառները թվելու ժամանակ Բար-Բահլուլ և Բար-Ալի բառագիրները կոչում են *āramāyā*, իսկ Բարհերրեոս քերականագետը կոչում է

 *al-āramāyā*

Այս վերջին բառը եթե գրենք ասորական տառերով, կստացվի



որով և ավելի կնույնանա *armenāya*

ձևի հետ: Կարող է կարդացվել ուղղակի *armānaya*:

